

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկ

Տարեկան ֆինանսական հաշվետվություն
2007

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	42
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	44
Հաշվապահական հաշվեկշիռ	45
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	47
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	48
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	49

**Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի
Ֆինանսական հաշվետվություններ
2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

ԱՆԿԱԽ ԳՆԱԿՈՒԹՅԱՆ ԵԳՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Բանկ)՝ կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի պատասխանատվությունը

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ անցկացված աուդիտի հիման վրա եզրակացություն արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով:

Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրենության կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են մեր աուդիտորական եզրակացությունն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով՝ ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«Գրանթ Թորնթոն Ամիո» ՍՊԸ

25 մարտի 2008 թ.



Grant Thornton

Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ

ՀՀ, Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964

Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964

F +374 10 260 961

www.gta.am


Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ


	Ծանոթագրություն	2007 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ստուգված)	2006 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Տոկոսային եկամուտներ	4	14,722,444	13,640,989
Տոկոսային ծախսեր	5	(7,441,031)	(2,501,883)
Զուտ տոկոսային եկամուտ		7,281,413	11,139,106
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		73,739	22,127
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(165,628)	(143,660)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ ծախս		(91,889)	(121,533)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	6	(52,984,269)	(37,927,006)
Զուտ իրացված վնաս վաճառքի համար մատչելի ակտիվների գծով		(135,256)	(377,797)
Զուտ շահույթ՝ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	7	8,335,233	2,699,004
Այլ եկամուտ	8	259,645	700,846
Գործառնական վնաս		(37,335,123)	(23,887,380)
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր		(1,173,085)	(506,228)
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(5,286,278)	(4,577,173)
Գործառնական ծախսեր		(6,459,363)	(5,083,401)
Տարվա վնաս		(43,794,486)	(28,970,781)

44-ից 87-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2008 թ. մարտի 25-ին ՀՀ ԿՔ խորհրդի կողմից և վերջինիս անունից ստորագրվել:

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ



Հ. ՀԱԿՈՒՅԱՆ
Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Հաշվապահական հաշվեկշիռ

հազար ՀՀ դրամ

	Ծանրա- գրություն	2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ստուգված)	2006 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ակտիվներ արտարժույթով</i>			
Դրամական միջոցներ		72,430	491,363
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	10	183,063,363	283,201,115
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	11	318,671,929	79,440,951
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	1,216	21,435,036
ԱՄՅ-ում տեղաբաշխված միջոցներ	13	2,940,262	5,117,455
Այլ ակտիվներ		222,321	166,248
		504,971,521	389,852,168
<i>Ակտիվներ տեղական արժույթով</i>			
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	14	24,600,695	15,290,302
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	49,245,329	19,171,500
Հիմնական միջոցներ	15	8,125,307	7,061,116
Ոչ նյութական ակտիվներ	16	62,707	70,484
Այլ ակտիվներ	17	883,508	566,507
		82,917,546	42,159,909
Ընդամենը ակտիվներ		587,889,067	432,012,077
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
<i>Պարտավորություններ արտարժույթով</i>			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	18	40,040,499	25,810,253
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	19	48,727,754	59,694,152
Այլ փոխառություններ	20	10,274,856	8,043,093
Այլ պարտավորություններ		67,382	29,897
		99,110,491	93,577,395

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծանոթագրություն	2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ստուգված)	2006 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ստուգված)
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		350,273,664	226,841,135
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	18	38,387,377	39,301,849
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ		93,622,987	61,532,562
Թողարկված պարտքային արժեթղթեր		48,958,097	38,987,836
Այլ պարտավորություններ	21	1,090,046	946,661
		532,332,171	367,610,043
Ընդամենը պարտավորություններ		631,442,662	461,187,438
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	22	100,000	100,000
Գլխավոր պահուստ	22	9,870,486	9,870,486
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	12	42,009,598	12,734,237
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ		(108,384)	(249,275)
Կուտակված վնաս		(95,425,295)	(51,630,809)
Ընդամենը սեփական կապիտալ		(43,553,595)	(29,175,361)
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		587,889,067	432,012,077

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

	Թողարկված կապիտալ	Գլխավոր պահուստ	Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2006 թ.	100,000	9,870,486	-	55,305	(22,660,028)	(12,634,237)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	-	-	-	(304,580)	-	(304,580)
Կապիտալում ուղղակիորեն ճանաչված ծախս	-	-	-	(304,580)	-	(304,580)
Տարվա վնաս	-	-	-	-	(28,970,781)	(28,970,781)
Ընդամենը տարվա եկամուտ և ծախս	-	-	-	(304,580)	(28,970,781)	(29,275,361)
ՀՀ Կառավարության ներդրում սեփական կապիտալում (ծանոթագրություն 22)	-	-	12,734,237	-	-	12,734,237
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006 թ.	100,000	9,870,486	12,734,237	(249,275)	(51,630,809)	(29,175,361)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	827	-	827
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	140,064	-	140,064
Կապիտալում ուղղակիորեն ճանաչված եկամուտ	-	-	-	140,891	-	140,891
Տարվա վնաս	-	-	-	-	(43,794,486)	(43,794,486)
Ընդամենը տարվա եկամուտ և ծախս	-	-	-	140,891	(43,794,486)	(43,653,595)
ՀՀ Կառավարության ներդրում սեփական կապիտալում (ծանոթագրություն 22)	-	-	29,275,361	-	-	29,275,361
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	100,000	9,870,486	42,009,598	(108,384)	(95,425,295)	(43,553,595)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

Ծանոթագրություն	2007 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ստուգված)	2006 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ստուգված)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ Տարվա վնաս Մաշվածություն և ամորտիզացիա	(43,794,486) 772,912 (43,021,574)	(28,970,781) 739,984 (28,230,797)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում Վաճառքի համար մատչելի ակտիվներ Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր Այլ ակտիվներ	96,386,646 (239,230,979) 20,776,244 (9,310,392) (373,075)	(130,743,760) (32,106,038) 115,072,884 (3,340,437) 16,377
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում) Թողադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և մնացորդներ Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ Թողարկված պարտքային արժեթղթեր Այլ փոխառություններ Այլ պարտավորություններ	123,432,530 13,315,774 21,124,026 9,970,261 2,231,763 180,870	71,566,411 9,711,129 (19,672,319) 17,504,980 (885,138) 296,779
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	(4,517,906)	(809,929)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ձեռքբերում Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում Հիմնական միջոցների վաճառք	- (1,844,626) 15,301	- (1,715,914) 10,524
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	(1,829,325)	(1,705,390)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում) Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	(6,347,231) 31,036,600	(2,515,319) 33,551,919
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	25 24,689,369	31,036,600

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Նախապատմություն

Հիմնական գործունեությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը («Բանկ») Հայաստանի Հանրապետության օրենքով հիմնադրված իրավաբանական անձ է:

Բանկի իրավաբանական հասցեն է. Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6: Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 619 (2006 թ.՝ 587):

Բանկի հիմնախնդիրը գների կայունության ապահովումն է Հայաստանի Հանրապետությունում, որն իրականացվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն իր հիմնախնդրի՝ Բանկը նաև պատասխանատու է՝

- Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերի և, եթե նախատեսված է օրենքով, այլ անձանց, և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատուն է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստան-

դարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Բանկի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Դուստր ընկերությունների համախմբում

Բանկը չի համախմբում երկու դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները Բանկի ֆինանսական հաշվետվություններում, քանի որ համախմբումն էական ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիալում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները և առևտրային բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Հատուկ փոխառության իրավունքով արտահայտված ակտիվները:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ զնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պայուսակի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ) կամ
- սկզբնական ճանաչման պահին կազմակերպության կողմից նախատեսվում են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանան, եթե կապված ածան-

ցյալ գործիքները համարվեն առևտրական նպատակներով պահվող, իսկ հինք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեն անորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:

- Որոշ ներդրումներ, ինչպես, օրինակ, կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնց տարբերությունը էականորեն ազդում է դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը հաստատագրված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում՝ բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ, նրանց, որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կամ որոնց տիրապետողը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաստատագրված կամ որոշելի վճարումներով և հաստատագրված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը՝ բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվներն այնպիսի ֆինանսական ակտիվներ են, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք-

ներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ ստանձնմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները՝ ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են անորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են անորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Վերջիններս չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են անորտիզացված արժեքով՝ բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի վերադասակարգումը չի բավարարում ապաճանաչման պահանջները: Անորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և անորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Իրական արժեքի չափման հիմունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց

նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Ձեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են դեկավարության գնահատականի վրա, իսկ զեղչման դրույթը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չշրջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Բանկը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

Չետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ՝

- իրական արժեքով չափվող, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, գործիքների խմբում դասակարգված ֆինանսական գործիքների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության միջոցով (բացառությամբ արժեզրկումից կորուստների և փոխարժեքային տարբերություններից շահույթի ու վնասի) մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է, և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ստացվելու ժամանակ ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվարկվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկման միջոցով:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրացել է, կամ երբ Բանկը փոխանցել է

ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Վաճառքի և հետզնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որոնց դեպքում արժեթղթերն արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ այլ բանկերի կամ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ռեպո պայմանագրի գործողության ընթացքում:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետզնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես բանկերից կամ հաճախորդներից ստացվելիք գումարներ: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսագումար և հաշվեկշռում հակադարձ ռեպո պայմանագրի գործողության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ձեռք բերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով՝ որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության առևտրային արժեթղթերից զուտ շահույթ/վնաս հոդվածում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն անրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն տիրապետողի հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն տարում, որի ընթացում կատարվել են:

Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Մետաղադրամների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերությունը ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումներն ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Բանկին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու

օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Շենքեր	10-ից 20 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	5 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի
Այլ	5 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված անորոտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Անորոտիզացիայի գծով ծախսը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	3-ից 5 տարի
-----------------------	-------------

Անորոտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Արժեզրկում

Անորոտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Անորոտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը, այլ դեբիտորական պարտքերը և չգնանշված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում

է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են դրանք և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառու կամ վարկառուների խումբն ունի զգալի ֆինանսական դժվարություններ, առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ:

Նախևառաջ Բանկը գնահատում է՝ արդյո՞ք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի դա զգալի թե ոչ, ապա այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման դիտարկում և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, չեն ներառվում արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի՝ ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերություն: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառու ֆինանսական դժվարություններ ունի, և Բանկի տրամադրության տակ կան ոչ բավարար տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարը Բանկը գնահատում է՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշ-

վետվությունում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված սեփական կապիտալի չգնանշված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրանք հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույթով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ենթակա չեն հակադարձման:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը, և օգտագործման արժեք: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույթը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինեք առանց համապատասխան մաշվածության և անորոշագիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինեք:

Կենսաթոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետա-

կան կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերում են:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը, զեղչման միջև հարկումը գործող այն դրույքի կիրառմամբ, որն արտացոլվում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Հարկում

Բանկը ազատված է բոլոր տեսակի հարկերից՝ բացառությամբ ներկրվող ապրանքների համար Հայաստանի Հանրապետության սահմանին զանձվող հարկերից, տուրքերից և մաքսային վճարներից:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լողացող տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի կամ հավելվածարի կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ենթակա գումարի միջև այլ տարբերությունների ամորտիզացիան, որը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

Տոկոսային եկամուտը, որը վերաբերում է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներին, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառվում է այն շահույթի կազմում, որը ստացվել է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկային կազմակերպությունների վճարները, վարկերի սպասարկման վճարները և այլ վճարները, որոնք հարակից ուղղակի ծախսերի հետ դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Որոշ նոր ՖՀՄՍ-ներ գործում են Բանկի համար 2007 թ. հունվարի 1-ից: Ստորև ներկայացված են այն նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք վերաբերում են կամ ապագայում կարող են վերաբերել Բանկի գործառնություններին և ազդել Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

ՖՀՄՍ 7, «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ» և լրացուցիչ փոփոխություն ՉՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի մեջ – Կապիտալի մասին բացահայտում (գործում է 2007 թ. հունվարի 1-ից): ՖՀՄՍ 7-ը ներկայացնում է նոր բացահայտումներ ֆինանսական գործիքների մասին տեղեկատվությունը բարելավելու համար՝ ներառյալ ռիսկերի քանակական գնահատումները և ռիսկերի կառավարման մեթոդները: ՖՀՄՍ 7-ը փոխարինել է «Բանկերի և մանանտիպ ֆինանսական հաստատությունների ֆինանսական հաշվետվություններում բացահայտումներ» ՉՀՄՍ 30-ին և «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումը և ներկայացումը» ՉՀՄՍ 32-ի որոշ պահանջներին: ՉՀՄՍ 1-ի փոփոխությունը ներկայացնում է նոր բացահայտումներ կազմակերպության կապիտալի չափի և կապիտալի կառավարման ձևի վերաբերյալ: ՖՀՄՍ 7-ի հաստատումը և ՉՀՄՍ 1-ի փոփոխությունը ոչ մի ազդեցություն չեն ունեցել Բանկի հաշվետվական շահույթի կամ ֆինանսական դիրքի վրա: Նոր բացահայտումներն արված են այս ֆինանսական հաշվետվություններում և ստանդարտների անցումային դրույթների համաձայն. Բանկը ներկայացրել է ամբողջական համեմատական տեղեկատվություն:

Այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Բանկն ընդունել է հետևյալ նոր ստանդարտները և մեկնաբանությունները.

- ՖՀՄՍԿ 7, *Վերահաստատման մոտեցման կիրառում ՉՀՄՍ 29-ի նկատմամբ* (կիրառելի է 2006 թ. մարտի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍԿ 8, *ՖՀՄՍ 2-ի Շրջանակ* (կիրառելի է 2006 թ. մայիսի 1-ին և դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍԿ 9, *«Կապված» ածանցյալ գործիքների վերագնահատում* (կիրառելի է 2006 թ. հունիսի 1-ին և դրանից հետո սկսվող տարիների համար)
- ՖՀՄՍԿ 10, *Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և արժեզրկում* (կիրառելի է 2006 թ. նոյեմբերի 1-ին և դրանից հետո սկսվող տարիների համար)

Նշված փոփոխությունների ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

Հետևյալ նոր ստանդարտները և մեկնաբանություններն արդեն հրապարակվել են, սակայն դեռևս կիրառելի չեն.

- ՖՀՄՍԿ 12, *Կոնցեսիոն ծառայությունների համաձայնություն* (կիրառելի է 2008 թ. հունվարի 1-ից)

- ՖՀՄՍԿ 13, Հաճախորդների լոյալությանն ուղղված ծրագրեր (կիրառելի է 2008 թ. հունիսի 1-ից)
- ՖՀՄՍԿ 14, ՀՀՄՍ 19, Վճարումների հաստատված ծրագրով ակտիվի սահմանաչափը, ֆինանսավորման նվազագույն պահանջները և դրանց փոխազդեցությունը (կիրառելի է 2008 թ. հունվարի 1-ից)
- ՀՀՄՍ 23, Պարտքային ծախսեր (կիրառելի է 2009 թ. հունվարի 1-ից)
- ՖՀՄՍ 8, Գործառնական Սեզմենտներ (կիրառելի է 2008 թ. հունվարի 1-ից)

4. Տոկոսային եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2007	2006
Տոկոսային եկամուտ՝ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Ժամկետային ավանդներ	11,760,400	8,118,941
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	367,997	2,547,436
Նոստրո հաշիվներ	826,277	1,131,074
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	129,291	235,674
